ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արարատի մարզի, Քաղցրաշենի
համայնքապետարան

N 112
24 սեպտեմբեր 2018թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Քաղցրաշեն համայնքի ավագանու թիվ 27, 28 որոշումների կրկնօրինակները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Կատ. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Վ. Արարատյան

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ *04200795*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, Քաղցրաշենի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 27

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.09.2018Թ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Քաղցրաշեն համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը.

1. Քաղցրաշեն համայնքի 2018թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *04200795*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, Քաղցրաշենի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՔԻ 2018Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇԵՑ՝

Քաղցրաշեն համայնքի վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) վարչական բյուջեի պ/ֆ 4891 հոդվածից 75000 դրամ հատկացնել09.01.02.51 (հանրակրթական ուսուցում) գ.ծ. դասակարգման 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածին առաջին դասարանի աշակերտներին և կարիքավոր ընտանիքների աշակերտներին պայուսակներով և մասամբ գրենական պիտույքներով ապահովելու համար, իսկ 120000 դրամ 01.01.01.51 (կառավարման մարմնի պահպանում) գ.ծ. դասակարգման 4269 հոդվածին՝ սպորտային գույք ձեռք բերելու համար, իսկ 100000 դրամ 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածին՝ խմելու ջրի ծախսերը ֆինանսավորելու համար:

բ) վարչական բյուջեի 09.01.01.51 (նախադպրոցական ուսուցում) 4511 (սուբսիդիա) հոդվածից 850000 դրամ տեղափոխել 08.05.01.51 գ.ծ. դասակարգման 4251 (ընթացիկ նորոգում) հոդվածին՝ գերեզմանատան ճանապարհների խճապատման համար:

գ) նույն դասակարգման նույն հոդվածից 950000 դրամ հատկացնել 04.05.01.58 (մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գ.ծ. դասակարգման 4251 հոդվածին՝ դաշտամիջյան ճանապարհների խճապատման համար:

դ) նույն դասակարգման նույն հոդվածից 900000 դրամ հատկացնել 08.05.01.51 գ.ծ դասակարգման 4251 հոդվածին՝ մշակույթի տան շենքի մուտքի աստիճանների վերանորոգման համար:

2.Քաղցրաշեն համայնքի ֆոնդային բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ֆոնդային բյուջեի եկամտային մասը ավելացնել 5082520 դրամով՝ ի հաշիվ գույքի օտարումից ստացված եկամուտների:

Ֆոնդային բյուջեի եկամտային մասից հատկացում կատարել հետևյալ ուղղություններով.

ա) 08.05.01.55 (հանգիստ, մշակույթ և կրոն) գ.ծ. դասակարգման 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածին՝ 450000դրամ՝ եկեղեցու զանգի, 300000 դրամ՝ եկեղեցու սուրբ սեղանի, 300000 դրամ՝ ջահի, 300000 դրամ ՝աթոռների, 150000 դրամ՝ մոմ վառելու սեղանի ձեռքբերման համար, միաժամանակ 950000 դրամ հատկացնել 5112 (շենք և շինության կառուցում) հոդվածին՝ եկեղեցու մուտքի, իսկ 268840 դրամ՝ եկեղեցու շենքի կառուցման աշխատանքների ֆինանսավորման համար:

բ) 01.01.01.51 (կառավարման մարմնի պահպանում) գ.ծ. դասակարգման 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածին հատկացնել 803680

դրամ՝ գրասենյակային կահույք (պահարան, վարագույր, աթոռ) ձեռք բերելու համար:

գ) 09.05.01.52 (արտադպրոցական դաստիարակության կազմակերպում և գույքի ձեռքբերում) գ.ծ. դասակարգման 5122 հոդվածին 500000 դրամ՝ երաժշտական դպրոցին վարագույրներ ձեռք բերելու համար:

դ) 06.04.01.52 (արտաքին լուսավորության պահպանում և շահագործում) գ.ծ. դասակլարգման 5112 հոդվածին՝ 950000 դրամ փողոցային լուսավորության անցկացման համար, իսկ 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 38000 դրամ՝ արտաքին լուսավորության ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

ե) 08.05.01.51 գ.ծ. դասակարգման 5134 հոդվածին 72000 դրամ՝ գերեզմանոցի ճանապարհների խճապատման և եկեղեցու մուտքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ**